ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Վաղարշապատ համայնքի ավագանու «Վաղարշապատ համայնքի 2025 թվականի բյուջեում փոփոխություններ կատարելու մասին» 2025 թվականի որոշումը կատարելու, Վաղարշապատ համայնքի ավագանու որոշման նախագծով (այսուհետ՝ նախագիծ) նախատեսվում է իրականացնել հետևյալ փոփոխությունը.

1. Հիմք ընդունելով Վաղարշապատ համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 25-ի N 111-Ն որոշումը:

1.1. Ավելացնել վարչական բյուջեի եկամուտների «Հիմնական շինությունների համար» 1133 տողը 40000.0 հազ. դրամ և «Տեղական վճարներ» 1351 տողը 8000.0 հազ. դրամ և բաշխել.

1.1.1. Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարման /բաժին 01, խումբ 1, դաս 1/ <<Էներգետիկ ծառայություններ>> հոդվածին /հոդ. 4212/ 3000.0 հազ. դրամ:

1.1.2. Ճանապարհային տրանսպորտի /բաժին 04, խումբ 5, դաս 1/ <<Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում>> հոդվածին /հոդ. 4251/ 37000.0 հազ. դրամ:

1.1.3. Փողոցների լուսավորման /բաժին 06, խումբ 4, դաս 1/ <<Էներգետիկ ծառայություններ>> հոդվածին /հոդ. 4212/ 8000.0 հազ. դրամ:

1.2. Ելնելով վերոգրյալից՝ առաջարկվում է Վաղարշապատ համայնքի ավագանու 2025 թվականի վերը նշված որոշման մեջ կատարել համապատասխան փոփոխությունները:

2. Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի դեկտեմբերի 27-ի N 2060-Ն որոշman N 9.1 հավելվածը և Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի հուլիսի 15-ի N 1169-Ն որոշումը:

2.1. Ավելացնել վարչական բյուջեի եկամուտների «Օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված՝ համայնքի բյուջե մուտքագրման ենթակա այլ եկամուտներ» 1393 տողը 51221.7 հազ. դրամ և բաշխել.

2.1.1. Նախադպրոցական կրթության /բաժին 09, խումբ 1, դաս 1/ <<Սուբսիդիաներ ոչ-ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին>> հոդվածին /հոդ. 4511/ 45159.2 հազ. դրամ:

2.1.2. Արտադպրոցական դաստիարակության /բաժին 09, խումբ 5, դաս 1/ <<Սուբսիդիաներ ոչ-ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին>> հոդվածին /հոդ. 4511/ 6062.5 հազ. դրամ:

2.2. Ելնելով վերոգրյալից՝ առաջարկվում է Վաղարշապատ համայնքի ավագանու 2025 թվականի վերը նշված որոշման մեջ կատարել համապատասխան փոփոխությունները:

3. Հիմք ընդունելով Վաղարշապատ համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 25-ի N 111-Ն որոշումը:

3.1. Ավելացնել բյուջեի ֆոնդային մասի եկամուտների <Հողի իրացումից մուտքեր> 6410 տողը 70000.0 հազ. դրամ և համայնքի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդի միջոցներից կատարել հատկացում համայնքի ֆոնդային բյուջե 74537.2 հազ. դրամ:

3.2. Համայնքի ֆոնդային բյուջեի ծախսերը ավելացնել 144537.2 հազ. դրամ և բաշխել.

3.2.1. Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարման /բաժին 01, խումբ 1, դաս 1/ <<Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում>> հոդվածին /հոդ. 5113/ 15000.0 հազ. դրամ:

3.2.2. Ճանապարհային տրանսպորտի /բաժին 04, խումբ 5, դաս 1/ <Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում> հոդվածին /հոդ. 5113/ 129537.2 հազ. դրամ:

3.3. Ելնելով վերոգրյալից՝ առաջարկվում է Վաղարշապատ համայնքի ավագանու 2025 թվականի վերը նշված որոշման մեջ կատարել համապատասխան փոփոխությունները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Ա. ՄԵԽԱԿՅԱՆ